Տարբերակ 1.0
Հաստատված է տնօրենների խորհրդի կողմից
27.11.2024թ.

«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆԶԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ»

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերությունը (այսուհետ՝ «ԶՊՄԿ» կամ «Ընկերություն») ընդունում է իր գործունեության շրջանակում ազդակիր համայնքների և այլ շահագրգիռ կողմերի հետ համագործակցության կարևորությունը: Ընկերության բոլոր շահագրգիռ կողմերը, ներառյալ՝ աշխատակիցները, տեղական համայնքները, բաժնետերերն ու կապալառու կազմակերպությունները իրավունք ունեն ակնկալելու, որ Ընկերությունն իր գործունեությունը կիրականացնի ներառական հիմունքներով՝ ի շահ բոլոր կողմերի:

Սույն Քաղաքականությունը վերաբերում է ԶՊՄԿ Տնօրենների խորհրդին, Ընկերության ամբողջ անձնակազմին, ներառյալ՝ բարձրագույն ղեկավար կազմը, ինչպես նաև Ընկերության կապալառուներին, գործընկերներին, հյուրերին և այցելուներին այնքանով, որքանով կիրառելի է:

Սույն Քաղաքականության շրջանակում Ընկերությունը՝

- ակտիվ առաջնորդության միջոցով խրախուսում է դրական և կառուցողական փոխգործակցություն բոլոր շահագրգիռ կողմերի հետ՝ փոխըմբռնման և վստահության ձևավորման համար:
- ապահովում է ԶՊՄԿ-ի գործունեության համապատասխանությունը (և ակտիվ աշխատում է նույնը մեր գործընկերների մասով ապահովելու հարցում) ՀՀ օրենսդրությանը և կիրառելի միջազգային ստանդարտներին և ուղեցույցներին, ներառյալ՝ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրին, բնապահպանական և սոցիալական կայունության բնագավառում Միջազգային ֆինանսական կորպորացիայի (ՄՖԿ) կատարողական ստանդարտներին և հանքարդյունաբերության ոլորտում Հանքարդյունաբերության և մետաղների միջազգային խորհրդի (ՀՄՄԽ) գործունեության սկզբունքներին:
- խթանում է արդյունավետ հարաբերություններ շահագրգիռ կողմերի, հատկապես Ընկերության ազդակիր համայնքների հետ՝ հիմնվելով փոխադարձ հարգանքի, վստահության և «Շահագրգիռ կողմերի հետ փոխգործակցության ԶՊՄԿ պլանի» իրագործման շրջանակում վերջիններիս հետ երկարաժամկետ համագործակցության վրա և հիմք ընդունելով ազատ, նախնական և գիտակցված փոխգործակցությունը:
- ներդնում է բողոքների քննության մեխանիզմ, որը հասանելի կլինի շահագրգիռ բոլոր կողմերին և կներառի բողոքների ուսումնասիրման, քննության և լուծման կարգ, ինչպես նաև նշյալ յուրաքանչյուր փուլի համար նախատեսված ժամկետ:
- իրականացնում է համայնքի հետ կապված բոլոր միջադեպերի բազմակողմանի քննություն՝ պարտավորվելով թափանցիկ կերպով իրականացնել ուղղիչ միջոցառումներ և դասեր քաղել յուրաքանչյուր միջադեպից՝ հետագայում կրկնություններից խուսափելու համար:
- աջակցում է համայնքների զարգացման ռազմավարությունների իրականացմանը, ինչը կապահովի երկարաժամկետ դրական ազդեցություն՝ բարձրացնելով տեղական համայնքների սոցիալ-տնտեսական բարեկեցությունը և խթանելով փոխադարձ բարգավաճումը:
- բացահայտում, գնահատում և կառավարում է համայնքի և սոցիալական ոլորտի հետ կապված վտանգները ռիսկերի գնահատման հուսալի գործընթացի միջոցով՝ համայնքային միջադեպերն ամբողջությամբ բացառելու և, միաժամանակ, առավելագույնի հասցնելու փոխադարձ հաջողության համատեղ օգուտները:
- շարունակաբար կատարելագործում է Ընկերության կայուն զարգացման կառավարման համակարգերը՝ համայնքային շահերն ու սոցիալական ասպեկտները կազմակերպության բոլոր ստորաբաժանումներում ինտեգրելու համար:
- ապահովում է ուսուցում Ընկերության բոլոր աշխատակիցների և համապատասխան կապալառուների համար, որպեսզի վերջիններս գիտակցեն իրենց սոցիալական պատասխանատվությունը և պատասխանատվությունը համայնքի հանդեպ, ինչը թույլ կտա նրանց հանդես գալու որպես Ընկերության սոցիալական նախաձեռնությունների վերաբերյալ տեղեկացված և ակտիվ մասնակիցներ:
- հատկացնում է անհրաժեշտ ֆինանսական և կադրային միջոցներ՝ Ընկերության սոցիալական և համայնքային քաղաքականություններին լիարժեք աջակցելու և դրանք իրականացնելու համար՝ արտացոլելով դրական ազդեցություն ունենալու ԶՊՄԿ-ի հանձնառությունը:
- իրականացնում է Ընկերության սոցիալական և համայնքային գործունեության մոնիտորինգ, ինչպես նաև թափանցիկ և պրոակտիվ կերպով համագործակցում է բոլոր համապատասխան շահագրգիռ կողմերի հետ:
- պարբերաբար վերանայում, թարմացնում է սոցիալական և համայնքային նպատակներն ու խնդիրները՝ հիմնվելով կատարողականի տվյալների և շահագրգիռ կողմերի հետադարձ կապի վրա:
- պարբերական աուդիտների և վերանայումների շրջանակներում գնահատում է սույն Քաղաքականության կիրառման արդյունքներն ու ցուցանիշները, բացահայտում է դրանց բարելավման ուղղությունները:

Նախագծի ղեկավար՝
Արտյոմ Պետրոսյան

Հեղինակ՝
Արմեն Ստեփանյան

Հրապարակման ամսաթիվը՝ 25.12.2024թ.

Tel: +374-60-500003, +374-285-33131
Email: info@zcmc.am